

4348



Առաջարկութեան «Հովհանք» 02 NOV 2010

78(02) այ  
4-79



Հայոց Ազգային  
Գրադարան:

# ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ

ԴԱՍԱԻՐԱՆՄԱՆ

— ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

29434

(ԶԵԽՆԱՐԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Կ Ա Զ Մ Ե Ց

Պ. Ա Խ Ե Ց Բ Ա Ե Ա Ն Ց

1914

ԵՐԵՒԱՆ. Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ»

20 FEB 2013

## ՄԻ ԵՐԿՈՒԻ ԽՕՍՔ

Հրատարակելով սոյն ցուցումները, ես ունեցել եմ նպատակ տալ որոշ դիւրութիւններ մեր երգեցողութեան ուսուցիչներին, ինչպէս գասարանական, նոյնպէս և խմբական պարապմունքների ժամանակի Դիւրութիւններ ասելով ես հասկանում եմ դասաւանդութեան այն գործնական ձևերը՝, որ առաջ եմ բերել այս գրքում։

Երգեցողութեան մեթոդիկան անհնար է լրիւ տալ, առանց առաջադրեալ նոտային սիստեմատիք վարժութիւնների, բայց քանի որ այդ ինչ ինչ պատճառներով կարելի չէ, ուստի բարեօք համարեցի եզրափակւել այս մեթոդական համառօտ տեսութեամբ։

Երգեցողութեան դասաւանդումն էլ միւս առարկաների դասաւանդութեան նման, պահանջում է այն ընդհանուր կանոնը՝ մի նիւթից միւսը թոփչքներով չ'պէտքէ անցնել, այլ սիստեմայով, հետեւղականութեամբ և տրամաբանական կապով։

Կարևոր գտայ հարևանցի պատմական ակնարկ ձգել եւրոպական դպրոցական աշխարհիկ

երգեցողութեան մասին։ Մեր դպրոցներում  
այդպէս չէ եղել աշխարհիկ երգեր աւանդելու  
ծագումը. մեր խալիքայական դպրոցներում  
անգամ հոգեոր երգերի հետ միասին աւանդում  
էին աշխարհիկ երգեր, բայց գրարար՝ օրինակ.  
«Յամսավերջն ապրիլի», «Յերկու ձեռին, եր-  
կու մոմ» և այլն և այլն. Մեր հոգեոր երգերը  
դպրոցներում երբէք ճնշում գործ չեն զրել  
աշխարհիկ երգերի վերայ, այդ հանգամանքն  
էլ կարելի բացարել և նրանով, որ մեր հոգեոր  
երաժշտութիւնն էլ կրում է աշխարհիկ երգերի  
կնիքը. այդ երկուսն էլ համարեա ժողովրդական  
ստեղծագործութեան բովով են անցել. Ով մեզ-  
նիդ «Գովեա Երուսաղէմ» շարականը նոյն բա-  
ւականութեամբ չի երգում, ինչ որ մի աշ-  
խարհիկ երգ. Սակայն հարկ է նկատել, որ  
ես ամենախնկարիք չեմ զտնում դասարանական  
պարապմունքների մէջ հոգեոր երգերի ներմու-  
ծութեան, վերապահելով այդ խմբական պա-  
րապմունքներին։ Հոգեոր երգեցողութեան դասա-  
ւանդութիւնն էլ զրա ժամանակ հարկաւոր է  
պարփակել Ս. Պատարագի երգերով և մի քանի  
անհրաժեշտ շարականներով, որոնցով բացւում  
են մեր հանդէսները—«Նորահրաշ պսակաւոր»  
և այլն։

Ես առհասարակ դէմ եմ հայկական նո-  
տաների դասաւանդութեան. դպրոցում կարիք  
չկայ ծանրաբեռնել աշակերտութեան այնպի-  
սի առարկաներով, որոնք կեանքի մէջ անգոր-  
ծադրելի են, մանաւանդ որ մեր շարականնե-  
րից շատերն արդէն կան հրատարակւած և  
գծային սիստեմի նոտաներով։ Հարկ եղած  
դէպքում կարելի նրանց մասին համառօտ տե-  
ղեկութիւն տալ, այդ էլ միայն ամենաբարձր  
դասարանում, ուր աշակերտները վերջացնում  
են երգեցողութիւնը։

Դասագիրքս կազմել եմ մեծ մասամբ  
թարգմանաբար օգտւելով Ալ्बրեխտ Ք—ի  
երգարանի յառաջաբանից. Պ. Воротниковъ-ի  
«Руководство къ преподаванію хорового  
пѣнія գրքից. Проф. У. Мазетти—Краткія у-  
казанія по пѣніи. Е. Линева—Музыкаль-  
ная грамота գրքերից և ուրիշներից ու պար-  
բերական հրատարակութիւններից։

Մ. Աւետիսեանց։

9 մայիսի 1914թ.  
Երևան.

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Աշխարհիկ երգեցողութիւնն իբրև դպրոցաւ կան պարտագիր առարկայ առաջին անգամ մտնում է Զուիցերիայի ժողովրդական դպրոցներում XIX-րդ դարի սկզբներում, երբ այնաեղ չնորհիւ Պեստալոցցու, տարածւեց կրթութեան և դաստիարակութեան նոր հիմնական սկզբունքը՝ ընդհանուր կրթութիւն, կամ բազմակողմանի զարգացումն մարդու ֆիզիքական ու հոգեկոր բոլոր ոյժերի և ունակութիւնների:

Մինչև Պեստալոցցու երեան գալը, ամեն տեղ դպրոցներում սովորեցնում էին միմիայն հոգեոր երգեր, իսկ աշխարհիկ երգը ճանաչւած էր իբրև անպարկեշտ պարապմունք դպրոցի համար։ Պեստալոցցին իր մանկավարժականութեական աշխատութիւններով և գործունեութեամբ ցոյց տւեց և ապացուցեց ժողովրդական դպրոցի բոլորովին այլ նշանակութիւնը՝ տարածել ժողովրդի մէջ ուղիղ ճանաչւած ընդհանուր կրթութիւն, որով կրօնի դասաւանդութեանը

դարձեալ տրւեց առաջնակարգ տեղ, բայց միւս առարկաներ էլ՝ զննական ուսուցումը, կարդալը, գիրը, հաշիվը, և այլն. ստացան բոլորովին ինքնուրայն դիրք, ինչպէս անհրաժեշտ միջոցներ երեխաններին ուղիղ կրթութիւն տալու։ Սյդ պատճառով երգեցողութիւնն էլ ժողովրդական դպրոցներում կորցրեց իր բացառիկ եկեղեցական բնոյթը և ճանաչւեց իբրև անհրաժեշտ առարկայ, որ շատ մեծ չափով ազգում է երեխանների բարոյական զարգացման վերայ։ Այսպիսով ժողովրդական դպրոցներում մացրին աշխարհիկ երգեցողութիւնը հաւասար հոգեոր երգեցողութեան։

1810 թւին Ցիւրիխում արդէն լոյս տեսաւ «Դասսպիրը երգեցողութեան Պեստալոցցու սկզբոնքով», որ հրատարակեցին Նեգել և Ֆէյֆեր ռասուցիչները։ Զուիցերիայի դպրոցների օրինակն հետեւելով գերմանական բողոքական դպրոցներում էլ մացրին աշխարհիկ երգեցողութիւնը, ընդունելով այն իբրև անհրաժեշտ հանրակրթական առարկայ և ուղիղ միջոց երեխանների հոգեոր կարողութիւնների և զգացմունքների ազնւացման։

1816 թւին Պրուսիայի լուսաւորութեան նախարար Ֆօն Այլտենշտայնը, որին Պրուսիան պարտական է իր դպրոցական շատ սիստեմանե-

բով, այս շրջաբերականով դիմեց Գերմանիայի բոլոր թագաւորութիւնների և իշխանութիւնների դպրոցական վարչութիւններին. «Մեր դպրոցներին արդարացի նախատինք են տալիս, որ նրանք երեխաններին կրթելուց, աշխատում են զարգացնել նրանց միտքը, բայց ամեննեին չեն աշխատում կազմակերպել նրանց սիրտը, որը մարդու բոլոր լաւ և վատ մտածողութիւնների և զգացումների ծագման աղբեւրն է։ Մեր դպրոցների այս միակողմանի ընթացքը մեզ կը հասցնի այն բանին, որ մենք մեր դպրոցներից միշտ կ'ստանանք չոր, ինքնառէր մարդիլ, որոնք ընդունակ չեն լինի զգալու ընդհանուրի բարիքը, ոչ մի բանի անկեղծ զգացումով չեն մօտենայ, առանց հասկանալու բորին և գեղեցիկը, ամեն բանի մէջ կառաջնորդւենիրենց եսամութեամբ և անհատական հաշիւներով։ Որպէսզի ներկայ երիտասարդութեան բարոյական բազմակողմանի կրթութեան համար մենք ժամանակին դործադրած լինենք մանկագրժական տեսակէտից ուղիղ ճանաչւած բոլոր նոր օրէնքները, ապա և պիտի առանձին ուշք դարձնենք և երգեցողոթեան վերայ, որովհետև նա ներկայացնում է մի կարող զօրութիմ, որը չի կարելի ոչ մի բանով փոխարինել. սա միակ ազդու և յուսալի միջոցն է աճեցնելու և բարձ-

բացնելու մարդուս զգացումները...»:

Այս շրջաբերականի շնորհիւ Զուփերիայի նման Գերմանիայում ևս աշխարհիկ երգեցողութիւնը դարձաւ իբրև դպրոցական պարտադիր առարկայ։ Դասագիրք ընդունւեց դարձեալ նեգելի գիրքը, որ մասամբ դժւարութիւններ ունէր իր ոչ սիստեմատիք լինելու պատճառով։

1820 թւին կսսենում նատրոպը հրատարակեց մի դասագիրք, որտեղ զիսաւոր տեղը տւած էր թէորիական վարժութիւններին։ Նեգելի և նատրոպի զրքերը հիմք ծառայեցին այնուհետև ինչպէս Գերմանիայում, նոյնպէս և ուրիշ տեղերում հրատարակւելու երգեցողութեան դասագրքերի, որոնց հետ ցանկացողը կարող է ծանօթանալ Գենչելի յօդւածներից, որ տպագրւած են „Педагогический Ежегодникъ“ թէրթի 1850—55 թւի համարներում։

Այսուհետև 40-ական թւականներին Ֆրանսիայի ֆրեօրելական մանկապարտէզներում նոյնպէս սկսեցին աւանդել աշխարհիկ երգեցողութիւն, դրանից յետոյայդ առարկան կամաց կամաց ձեռք բերեց քաղաքացիական իրաւունք հաւասար գիրքի վերայ դրւելու միւս առարկաների հետ։



ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Սովորեցնելով երեխաներին ինքնուրոյն և ճիշտ երգել նոտաներով և առանց նոտաների հոգեոր, ժողովրդական, գրական, ազգային և պատմական լաւ երգեր, դպրոցը դրանով բաւարարում է մարդու բնական ամենամաքուր և բարձր պահանջներին և կրթատում անվայել երգերի գործ ածելը, որոնք մարդու մէջ զարթեցնում ու զարգացնում են ցածր և ստոր անասնական զգացումներ և զգայական տգեղ ցանկութիւններ։ Անսխալ և ճիշտ կատարումն այնպիսի երգերի, որոնց թէ բառերը, և թէ եղանակները գեղեցիկ են իրենց ներդաշնակութեամբ, ազդում են ուղղակի երեխաների զգայւն սրտերի վերայ, փափկացնում, զարգացնում և բարձրացնում են նրանց զգացումները։

Ներդաշնակ հոգեոր երգերը զարթեցնում են երեխաների մէջ կենդանի և վառ կրօնական զգացումներ։ Բնտիր ժողովրդական, ազգային և պատմական երգերի գերը նոյնպէս մեծ է լինում դպրոցում, եթէ նրանք կատարում են ճիշտ, երաժշտական պահանջների համեմատ, նրանք կենդանութիւն են տալիս դպրոցական պարապմունքներին, տալիս են նրանց իսկական

ժողովրդական բնոյթ և զարգացնում են երեխաների մէջ բուռն զգացումներ սիրոյ և մեծարանքի դէպի իր ժողովրդը, հայրենիքը և նախորդների պանծալի յիշատակը։

Այդպիսի երգեր գործածելը մեծ հաճոյք է պատճառում ուսանող երիտասարդութեան դպրոցական պարապմունքներից ազատ ժամանակ, թէ դպրոցում և թէ դուրսը։ Այս բանն աւելի կարեոր է մեղ մօտ, որովհեան մեր ազատ օրերն աւելի շատ են, ընտանեկան շրջաններում քիչ կան այնպիսի զբաղմունքներ, որ աշակերտներն անցկացնեն հետաքրքիր և կրթիչ։ Երգեցողութեան օգուտն աշակերտների միջոցով տարածւում է և այն հասարակութեան ու ազգի վերայ, ուր նրանք են լինում։ Սովորելով դպրոցում կանոնաւոր երգեցողութիւն, աշակերտները կարող են կազմել եկեղեցական երգեցիկ խմբեր, որոնք կը նպաստեն հասարակութեան ջերմեռանդ կարգակաշտութեան։ Դա առանձնապէս լաւ է գիւղերում, ուր չը կան երաժշտական խմբեր, բացի այդ անդրագէտ ծնողներն իսկոյն տեսնում են ուսման և կը թութեան անմիջական ազդեցութիւնը։

Ներդաշնակ երգերը, թէ ժողովրդական, ազգային ու գրական, պատմական բովանդակութեամբ, դարձեալ դպրոցի միջոցով տարածւում

Են հասարակութեան մէջ և զարթեցնում նրանց  
մէջ ազնիւ զգացումներ։ Երգեցողութեան ուս-  
ման այս բարձր արդիւնքներն ապացուցանում  
են առարկայի կարևորութիւնը դպրոցում, ահա  
թէ ինչու համար երգեցողութիւնը Գերմա-  
նիայի, Զուիցերիայի դպրոցներում ոչ թէ մի-  
այն հաւասար բարձրութեան վերայ է դրւած  
միւս առարկաների հետ, այլ և տարածւած է  
բոլոր մանկապարտէզներում ու ինամատ-  
ներում։

Մեր դպրոցներից շատերը կարող են եր-  
գեցողութիւնը կանոնաւոր անցնել, բայց ցա-  
ւալի է արձանագրելու համար, որ մեր դպրոց-  
ների վարիչները կանգնած չեն իրենց կոչման  
բարձրութեան վերայ, և նրանցից շատերը մեծ  
նշանակութիւն չեն տալիս երգեցողութեան և կա-  
նոնաւոր միջոցներ չեն գործադրում այդ առար-  
կան իր բարձրութեան վերայ դնելու։ Նրանց  
գրադարաններում շատ հաղթագիւտ քան կը լի-  
նի, թէ մի գիրք գտնէք երաժշտական գրակա-  
նութեան վերաբերեալ, մինչ Գերմանիայի,  
Զուիցերիայի և այլ քաղաքակիրթ երկրների  
դպրոցների գրադարանները հարուստ են երա-  
ժշտական գրականութեան վերաբերեալ բազմա-  
թիւ գրքերով։ Գուցէ մեզ առարկեն, թէ մեզ-  
նում այդ առարկային տիրապետող ուսուցիչ-

ների սովէ է, թէ շատերը նրանցից միմիայն  
հասարակ արւեստագէտներ են, առանց սե-  
մինարիական կրթութեան։ Մեր կարծիքով դա  
շատ սխալ մտածելակերպ է, եթէ երաժշտու-  
թեանը դպրոցում տրուի իր պատկանեալ տե-  
ղը, այն ժամանակ ոչ ոք չի խորշի այդ առար-  
կայի դասաւանդութիւնից և բոլոր կարևոր  
ոյժերն էլ երևան կը գան։ Պէտքէ պաշտօնը,  
ինչ էլ դա լինի, ունենայ իր գրաւիչ կողմը,  
որպէսզի կարողանայ դէպի իրեն քաշել լաւ և  
կարևոր ոյժեր։ Մեզ համար երաժշտութեան  
ուսուցիչներ ամենից առաջ պիտի նախապատ-  
րաստեն մեր միջնակարգ դպրոցները, բայց հենց  
այդ դպրոցներում երաժշտութիւնն ու երգը  
դրւած չեն այնպէս, ինչպէս հարկն է։ Քանի  
որ մեր մէջ դեռ կուլտուրան իր բարձրութեան  
չի կարողանում համնել հենց իրեն բարձր  
դպրոցների միջոցով, հապա մենք էլ մեր  
կուլտուրական կեանքի յառաջադիմութեան վե-  
րայ ինչ յոյս կարող ենք դնել և ինչպէս կա-  
րող ենք այն կրթութիւնը, որ տալիս են  
մեր դպրոցները, նպատակին հասած համարել։  
Ուսիշ կենսակիրթ երկրներում կան առանձին  
երգեցիկ խմբեր, որոնք երգում են եկեղե-  
ցիներում, ու գէպի իրենց են գրաւում ժողո-  
վրդի մեծ մասը, որը սովոր է, մանաւանդ

տօն օրերին, կոնծելով զբաղւել. հետևապէս դրա դէմ կուելու զէնքերից մէկն էլ հանդիսաւնում է երգեցողութիւնը: Բայց քանի մեր մէջ նման ընկերութիւններ հիմնելը կապւած է շատ դժւարութիւնների հետ, հետևապէս դպրոցը կարող է իր կողմից որոշ օգնութիւն և պէտքականութիւն ցոյց տալ դէպի այն հասարակութիւնը, որի շահերի ուղիղ ընթացքի համար է կառուցւում ինքը: Բայց յաճախ դուք տեսնում էք մեր դպրոցներն իրենց աշակերտութեան էսթետիքական պահանջները չեն կարողանում բաւարարել, ուր մնաց թէ մտածեն հասարակութեան մասին: Եւ այդ բոլորը նրա շնորհիւ է, որ մեր մէջ հասարակութեան և ազգի շահերով տարւողներ չը կան. մի կատարեալ սովէ մեր մէջ անձնւէր ու դործին սիրտ ցաւեցնող մարդկանց թիւը:

Քանի, քանի քանքարաւոր հանճարներ մարում են մեր մէջ անյայտ բոլորին..., և այդ բոլորի պատճառն այն է, որ մեր դպրոցներում գեղարւեստական առարկաներն այնքան փխրուն հիմքերի վերայ են դրւած:

Ճիշտ է, մեր ազգային պատմութիւնն այնքան էլ արգասաւոր չի եղել, ինչպէս գեղարւեստի միւս ճիշտերի զարգացման, նոյնպէս և երաժշտութեան համար, որով նրանցից շատերը

զարգացել են միակողմանի, բայց և այնպէս մեր ժողովուրդը դարձեալ իւր մէջ պահել է այնպիսի ինքնուրույն և հարազատ գծեր, մինոր մելանիսոլիք տրամադրութիւնների բազմաճն արտայտութիւններ, որը կարող է և գեղարւեստի այդ ճիշտում ծնել Այվազովսկիներ. միմիայն հարկաւոր է միջոցներ տան նրան. ահա այդ միջոցներից մէկն է հայ դպրոցականին տալ ուղիղ և ճիշտ երաժշտական թէկուզ տարբական կրթութիւն, ընդունակների համար արդէն հեշտ կը լինի սուզեւել այդ աստւածային արւեստի խորքերը: Թրով գուցէ ապագայում մենք էլ հնարաւորութիւն կունենանք բաց ճակատով կանգնել կուլտուրական ազգերի շարքում. մի ազգի կուլտուրական մեծութիւնը միշտ չափում է նրա արւեստների զարգացման բարձրութեամբ, առաւելապէս նրա երաժշտութեամբ. այդ եօթն տառերից կազմւած լեզուի ընթերցումը մատչելի է բոլոր ազգերին: Թէ ինչ կերպ դաստւանդած երգեցողութիւնը կարող է այսպիսի դրական արդիւնքների հասնել, ահա դրա մասին է, որ մենք կաշխատենք ծանօթացնել նրանց, որոնք մի որևէ կերպ հետաքրքրում են այդ առարկայի դասաւանդմամբ:

ՀՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒԽԲՆԵՐ ԴԱՍԱԻԱՆԴՄԱՆ:

Երգեցողութեան ուսուցումը դպրոցներում իրեն նպատակ չը պէտք է զնի տալ դերասան երգիչ-չուհիներ, նրա պահանջը բաւարարւած կ'լինի, եթէ աշակերտութեան մեծամասնութիւնը դպրոցն աւարտելուց յետոյ գիտէ բաւական թւով ընտիր հոգեոր, ժողովրդական և ազդային երգեր և կարող է նման ու նոյն երգերը երգել նոտաներով և յիշողութեամբ։ Անհնարին է պահանջել, որ դպրոցն այսպիսի հետևանքների հասնի բոլոր աշակերտութեան վերաբերմամբ։ Դիտողութիւններն այս առթիւ գերմանական և գւիցերական դպրոցներում միջին հաշւով տւել է հետեւեալ թւերը. 80 հոգուց 10-ը ուսումը վերջացնելուց յետոյ դուրս են եկել լաւ երգիչներ, 20-ը կարող են կարգին երգել նոտաներով և յիշողութեամբ, 25-ը մասնակցում են երգեցիկ խմբերին, չը խանգարելով պահանջւած կանոնները, 20-ը երգում են միայն լսողութեամբ, իսկ 5-ը եղել են անընդունակներ երաժշտական լսողութիւն չունենալու պատճառով։

Աշխարհիկ երգեր սովորեցնելու համար անհրաժեշտ է, որ դպրոցն ունենայ ժողովածուներ այսպիսի երգերի, որոնք ըստ եղանակի

և բովանդակութեան լինեն, ժողովրդական, ազգային և պատմական 1,2 և 3 ձայներով։ Ցածրքաժանմունքների համար մեծ մասամբ հարկաւոր են երկձայն երգեր, որովհետև երկձայն երգեցողութիւնը բազմաձայն երաժշտութեան հասարակ և պարզ ձևն է։

*1006  
29/34*

Բոլորին յայտնի է, որ երեխաներն ըսկըսում են երգել շատ վաղ, երբեմն երեք տարեկան հասակում, հետեւապէս երեխաներին պիտի սովորեցնել երգեր մինչև նրանց դպրոց մտնելը։ Զուկիցերիայում և Գերմանիայում պարտադիր ուսումն սկսում է 6 տարեկան հասակից, երեխաները նախ քան այդ սովորում են ընտանիքներում, մանկապարտէզներում և խնամատներում և այլն։ Մեզ մօտ երեխաները դպրոց են ընդունւում 7 տարուց ոչ շուտ, հետևապէս անհրաժեշտ է նրանց երգել սովորեցնել, նախ քան դպրոց մտնելը։ Ի հարկէ փոքր երեխաները կարողանում են երգել միայն լսողութեամբ այն էլ հեշտ և մատչելի երգեր։ Օրօրոցի երգերը, օրօրները շատ համապատասխան են այդ հասակի երեխաներին, լաւ կը լինի նման երգերը սովորեցնել դաշնամուրի կամ մի այլ գործիքի նւագակցութեամբ։

Առաջին բաժանմունքում երգեցողութիւնը չի կարելի սկսել թէորիաներով։ անհնարին է

մի օտար լեզու իւրացնելու համար նախ և առաջ այդ լեզվի քերականութիւնից սկսել, անհրաժեշտ է, որ երեխաներն իմանան գոնէ մի քանի ֆրազներ այդ լեզվով գործ ածել, որ նիւթ կծառայէր լեզվական տարրական կանոնների։ Դրա համար էլ երգեցողութիւն սովորեցնելուց տարրական թէորիական բացատրութիւնները կարելի է տալ այն ժամանակ, երբ երեխաները գիտեն մի քանի երգ ճիշտ երգել զանազան գամմաների վերայ։

Որովհետեւ դպրոցական երգեցողութեան գլխաւոր նպատակը կայանում է նրանում, սովորեցնել երեխաներին երգել պարզ, լաւ երգեր, այդ պատճառով էլ տեսական մասն ըսկդրում կարեոր նշանակութիւն չը պէտք է ունենայ և պիտի եզրափակւի անհբաժեշտ բացատրութիւններով, հասկանալու և կատարելու համար ճշտութեամբ այն երգերը, որոնք տւեալ դասի նիւթն են կազմում։ Այս տարրական վարժութիւնները և բացատրութիւնները բաժանում են 3 կատեգորիաների՝ ա) մելոդիական, բ) ոիթմական և գ) պարզ ձայնական և տարւում են սխոտեմատիքական հետեւղութեամբ, զուղընթաց երգերի կուրսին, սկսած ամենապարզերից։ Դրա մէջ մտնում են և այն վարժութիւնները, որոնք նիւթ ունեն երկձայն

### Երգեցողութիւնը։

Երգեցողութեան ամբողջ կուրսը ժողովը դական դպրոցներում բաժանում է 3 աստիճանների. հիւսիսային Գերմանիայում, ուր ուսումը պարտադիր է 6—14 տարեկան հասակը՝ առաջին և երկրորդ աստիճաններին տրւում է երեքական տարի, իսկ երրորդին 2 տարի։ Իսկ Զուլցերիայի դպրոցներում, եթէ նրանք վեցամեայ դասընթացք ունեն, ամեն մի աստիճանին ընկնում է 2 տարի։ Առաջին աստիճանում նշանակում է շաբաթական 4 կէս ժամեայդաս, որի ժամանակ երեխաներն երգում են լողութեամբ, 10 րոպէ գործ է ածւում նախապարաստական վարժութիւնների երգելուն, իսկ 20 րոպէն խլում է տրւած երգը։

Երկրորդ աստիճանին տրւում է շաբաթական 2 ժամ։ Կուրսի սկզբում մօտ ամիս ու կէս կրկնողութիւն է արւում անցած երգերի։ Յետոյ 10—15 րոպէ դասի սկզբից տալիս են ձայնամարզութեան, 20 րոպէ տարրական վարժութիւնների և 30 րոպէ նոր երգ սովորելուն։

Երրորդ աստիճանում էլի շաբաթական 2 ժամեայ դասի ընթացքում մի ամսի չափ տրւում է անցած երգերի վարժութիւններին և կրկնողութեան, դարձեալ կարեոր թէորիական բացատրութիւններով։ Պարապմունքները տար-

ւում են այնպէս, ինչպէս երկրորդ աստիճանում:

Համաձայն պլրուսական դպրոցական կանոնագրութեան, որ տւեց լուսաւորութեան նախարար Թալկը 1872 թւին, ցածր աստիճանում պահանջում է 12—15 հոգեոր միաձայն երգեր, նոյնքան և աշխարհիկ, երկրորդ և երրորդ աստիճաններում 15—20 հոգեոր և աշխարհիկ երկձայն երգեր: Հետեապէս տարբական դպրոցաւարտն իմանում է մօտ 40 աշխարհիկ և նոյնքան էլ հոգեոր երգեր երգել նոտաներով և յիշողութեամբ: Սակայն մենք հոգեոր երգերի գործածութիւնն այժմ պիտի դուրս բերենք առաջին երեք ցածրի բաժանմունքներից. թէ ինչ երգեր պիտի ցուցակի մէջ առնել ամեն մի դասարանում, դրա մասին մենք յետոյ կը խօսենք:

Երրորդ բաժանմունքում (ծխական դպրոցներ) պիտի սկսել արդէն նոտաների ուսումը, ամեն մի աշակերտ պիտի իր տուաշն ունենայ դասազիրքը, որն այնպէս պիտի կազմւած լինի, որ նոտաները սովորելուց առաջ աշակերտներն առաջ սովորեն այդ նոտաների տակ գրւած երգի ձայները, որն իբրև օժանդակ միջոց մեծ ժառայութիւն է մատուցանում նոտաների հեշտ սովորելուն: Նրանք երգելով միաժամա-

նակ հետեւում են նոտաներին, աեսնում են, որ երգելու ժամանակ ինչպէս մի նոտայի տակ գրւած վանկը կամ կարճանում է, կամ երկարանում, կամ նոտաներն ինչ ձեռվ են գրւած, ինչ հեռաւորութիւն ունեն իրարից և թէ ամեն մի վանկ համաձայն իր վերև գրած նոտայի ինչպէս բարձրացւում է, կամ ցածրացւում:

Դասաւութեան այս ձեռվ մի քանի մանկավարժներ մինչև հիմա էլ համարում են մեքենայական և անհամապատասխան մանկավարժական պահանջների: Բանը նրանումն է, որ նրանք չեն իմանում, որ երգեցողութեան ըսկըզի դասերում (երրորդ բաժ. տարեսկիզբ) աշակերտներին սովորեցնում են միմիայն լսողութեամբ, հետեապէս և խօսք չի կարող լինել մեքենայական ուսուցման ձեր մասին: Զայնազրեալ երգարանով դասաւանդել տարրական երաժշտութիւն ունի հետևեալ առաւելութիւնները: Սա նպաստում է 1) եղանակն արագ սովորելուն, 2) աշակերտները ծանօթանում են նոտաների գրութեան ձերն և տեսնում որ այդ նշաններով են արտայայտում երգերի եղանակները, ինչպէս տասերով բառերը և հետեապէս, երբ ուսուցիչն անցնում է ձայնանիշների բացատրութեան, այդ ժամանակ ոչ թէ միայն նրանց զբելու ձեռն արդէն ծանօթ է ե-

ըեխաներին, այս նրանք հասկանում են դրա ընդհանուր նշանակութիւնը. այս բոլորը համարեա մեծ չափերով բաւարարում են ներկայ մանկավարժական պահանջներին:

Երեխաներն երգելիս պիտի երգեն ամբողջ կրծքով, հնչիւնալից, բարձր և լիքն ձայնով:

Անհրաժեշտ է երգեցողութեան ժամանակ դաշնամուրի նւազակցութիւն, իսկ եթէ այդ հնարաւոր չէ, ապա պիտի դիմել միւս երաժշտական գործիքների օժանդակութեան: Միւս գործիքներից առաջին տեղը բոնում է ջութակը, եկեղեցական երգեցողութեան համար երգեհոնը (Փիսգարմոնիայ): Զութակի առաւելութիւնները կայանում է ա) նրա ձայնի բերդիստրն այն է, ինչ երեխաներինը, բ) նրա ձայնատեմբը երեխաների ձայնատեմբըց շուտ է ջոկւում, գ) ջութակի վրայ կարելի է նւազել թոյլ, ուժեղ, կամաց-կամաց ուժեղացնելով և թուլացնելով ձայնը, դ) ուսուցիչը նւազում է կանգնած և կարող է կարել դիտողութիւններ անել, նոյնիսկ նւազելիս:

Ե) Զութակը համեմատած միւս գործիքների հետ աւելի էժան է և տեղափոխելու յարմար, հնարաւոր է միշտ պահել սարքած:

Նոր երգ սովորեցնելիս ուսուցիչը պիտի առաջ ինքն երգի, եթէ աջողակ ձայն ունի,

ապա դիմի գործիքի օգնութեան: Գործնականում մեծ տեղ չի բոնում այժմ գործիքներով երաժշտութիւն աւանդելը, բայց դա հենց մի պիտու է և այն ժամանակ, երբ ուսուցիչն իր ձայնի աջողութեան վրայ վատահ, գործիք չի դործածում, գործիքը բացի այն, որ ուսուցչի թոքերը որոշ չափով ապահովում է յաճախ անյարմար դասարաններում երգեցուղութիւն անցնելիս, այլի գեղարւեստական հաճոյք է զարթեցնում երեխաների մէջ, որոնցից շատերն ապագայում նախանձախնդիր են լինում սովորելու մի որևէ գործիքի վրայ նւագելու:

Դասարանական երգեցողութեան ժամանակ, պիտի պահանջել աշակերտաներից, որ նըրանք էլ չափ տան, որի ժամանակ պիտի խուսափել խմբապետական բարդ չափերից: Մեծ ուշը պիտի դարձնել ինտոնացիայի վերայ առանձնապէս ոհ — ի— ձայնաւորների ժամանակ: Երգեցողութեան դասերի համար զըպրոցներն առանձին սենեակ պիտի ունենան, ուր լաւ լոյս լինելուց և ընդարձակութիւնից բացի, պէտք է լինի ձայների ճշգրիտ անդրադարձում (отражение звука) կանոնաւոր երգեցողութեան առաջին պայմանն է շնչառութեան կանսնաւոր գործ ածելը: Պէտք է վարժեցնել աշակերտաներին շնչել հանդարտ, ծանր, անշշուկ և այնքան

խորն, որ կրծքի ցանցապատերն ըստ կարել-  
ւոյն լայն բացւեն. պիտի ներշնչել այն ժամա-  
նակ, երբ դեռ մի փոքր օդ մնացած է լինում  
թոքերում:

Ներշնչումն և արտաշնչումը պիտի կատա-  
րել քթի միջով, որպէսզի կոկորդի պատերը չը  
չորանան, ճիշտ և լաւ շնչելուց է կախւած  
ձայնի տեսղութիւնն և ոյժը: Երգելուց պիտի  
կանգնել ուղիղ կուրծքը դուրս գցած, ճախ-  
ոտքը մի փոքր առաջ դրած. Երգեցողութիւնը  
պէտք է այնպիսի թեթևութեամբ կատարել,  
ինչպէս խօսակցութիւնը: Պէտք է ուշք դարձնել,  
որ երգելուց դէմքը ծամածողութիւններ չունե-  
նայ, դրա համար պիտի պատւիրել երգիչներին  
տանը հայելու առաջ վարժւեն դրան: Բարձր  
նոտաներ երգելուց պիտի գլուխը դէպի առաջ  
թեքել և ոչ թէ յետ, ինչպէս ընդունւած է:

Երգելուց առաջ միշտ կրկնել մի քանի  
անգամ տւած երգի հիմնական ակորդներ կազ-  
մող նոտաները I աստիճան, IV, V և I, որից  
յետոյ անցնել երգելուն: Սա այն առաւելու-  
թիւնն էլ ունի, որ շատ հեշտացնում է երգի  
սօլֆեդջիօն և շուտ չի փոխում գամման:

Նոր երգը մի քանի անգամ ուսուցիչն ին-  
քն է երգում, ապա նւագում գործիքի վերայ,  
որից յետոյ սովորեցնում է երգը մաս մաս

տալով բառերի և հիւսւածքի բացատրութիւնն  
այն չափով, ինչ չափով ինքն է կարեոր գըտ-  
նում: Լաւ չը սովորած երգը չը պէտք է դա-  
սից դուրս երգւի: Դասատուն ինքը պիտի խու-  
սափի դասարանի հետ երգելուց, որովհետեւ եր-  
գելու ժամանակ ինքը չի կարողնկատել նրանց  
թերութիւնները:

Առաջին և երկրորդ բաժանմունքում պի-  
տի անցնել մանկական երգեր, որոնց ընտրու-  
թիւնը պէտք է ամեն ուսուցիչ ինքն անի և  
տարւայ սկզբից կազմի իր ծրագիրը—ոեպեր-  
տուարն իւրաքանչիւր բաժանմունքի համար  
ջոկ: Պատահում են յաճախ այնպիսի աշակերտ-  
ներ, որոնք միանգամայն գուրկ են լինում  
երաժշտական լսողութիւնից, այդպիսիներին  
պէտք է չը թողնել նոր երգը դասարանի հետ  
երգել, բայց այդ արգելումը պիտի կատա-  
րել այն ձեռվ, որ նրանց եսը չը տուժէ: Երկ-  
րորդ բաժանմունքում տարւայ կէսից յետոյ,  
երբ աշակերտներն ունեն բաւական երգերի  
պաշար, կարելի է անցնել երկձայն երգեր,  
միայն թէ նրանց առաջ պիտի սովորեցնել բ-րդ  
ձայնը, յետոյ երբ այդ կը իւրացնեն և առաջին  
ձայնը: Այս պրիոնն ունի այն առաւելութիւնը,  
որ երեխաները շուտ չեն սխալում և մի ձայ-  
նից միւսը չեն անցնում երգելուց: Պէտք է

շեշտել և այն, որ հաւասար փոխանակութիւն  
պիտի ունենան ինչպէս խմբով—դասարանով,  
նոյնպէս և ջոկ-ջոկ երգելը:

Գ. բաժանմունքում կարելի է սկսել նու-  
տաների ուսումը: Յարմար դասագիրք կարող է  
է ծառայել Ռ. Մելիքեանի և Ա. Մանուկեանի  
«Երաժշտական այբբենարան»-ը, որը շատ դիւ-  
րութիւններ ունի—երգի միջոցով, ինչպէս  
զրքում շեշտել ենք, անցնել նոտաներ, ուր  
միաժամանակ աշակերտները ծանօթանում են  
նոտաների և գրութեան ձեին և տեղութեան  
նշաններին և այլն: Ուրեմն Գ. բաժանմունքից  
պիտի սկսել երաժշտական տարրական թէո-  
րիայի ուսումը, այնուհետեւ կարելի է և ան-  
հրաժեշտ է սիստեմատիքօրէն անցնել այդ  
ուսումը շարունակելով և միւս բարձր դասա-  
րաններում: Այդ բարձր բաժանմունքներում  
պիտի մեծ տեղ տալ սօլֆեդիօյին և երաժշ-  
տական թելադրութեան: Պրանք նիւթից առ  
այժմ գուրս համարելով, բաւականանում ենք  
այս համառօտ տեսութեամբ, որից յետոյ աւե-  
լորդ չենք համարում մի քանի խօսք ևս ասելու  
երգեցիկ խմբեր կազմելու մասին:

Բազմաձայն խմբերը լինում են 3 տեսակ,  
ա) արական (միասեռ) խումբ,  
բ) իգական (միասեռ) խումբ,

գ) խառն (երկսեռ) խումբ:  
Քառաձայն խառն խումբ.

Առաջին ձայնով երգող երգիչները ընդունւում  
են՝ Սովորանո և դիսկանո հիմնական ութնեակի  
1 աստիճանից մինչև 2-րդ ութնեակի 5-րդ  
աստիճանի դիպագոնով:

Երկրորդ ձայնի երգիչներ, այլու փոքր ութնեակի  
6-րդ աստիճանից մինչև 2-րդ ութնեակի 2-րդ  
աստիճանի դիպագոնով (ձայնաբովանդակու-  
թեամբ Լա-րե):

Երրորդ ձայնով երգողներ՝ տեսոր—նոյն ձայնն  
են վերցնում ինչ որ Սափրանները—պահանջ-  
ւող նոտան է ցածրում ու, իսկ բարձրում  
կրծքի ձայնով ՏՕ:

Չորրորդ ձայնի երգիչներ բաս—փոքր ութնեա-  
կի 4-րդ աստիճանից մինչև 2-րդ ութնեակի  
2-րդ աստիճանը (Բա-րե):

Խմբի յաջողութիւնը որոշ չափով կախւած  
է երգիչների ճիշտ ընարութիւնից: Թէ ամեն  
ձայնից ինչքան երգիչներ պէտք է վերցնել—  
կասենք հետեւեալը, որ դա մեծ չափով կախւած  
է խմբապետի երաժշտական հասկացողու-  
թիւնից և ճաշակից, բայց և պիտի շեշտել, որ  
մի ձայն միւսի վերայ չ'պէտք է ճնշում գործ  
գնի: Կան այժմ մարդիկ, որոնք մելոդիան եր-  
գող ձայնը շատ թոյլ են վերցնում և առաջն

ձայնը հազիւ է լսում, իսկ միւս ձայներն ուժեղ, սակայն ընդունւած է հետևեալ չափը, օրինակ 32 հոգուց կազմած խումբը հետևեալ քանակով պէտք է ունենայ ամեն ձայնի երգիչներից: 32 հոգուց մօտաւորապէս 12 սոփրան, 7 այլտ, 6 տենոր և 7-ը բաս պիտի լինեն:

Ամեն մի երգ նախ պիտի ջոկ-ջոկ ձայներով սովորեցնել այսինքն ամեն խմբին իր պարտիան, մինչև նրանք այդ հաստատ կը սովորեն. անվարժ երգիչների հետ գործ ունենալուց, պէտք է իսկոյն չը միացնել բոլոր ձայները, որովհետեւ նրանք հեշտութեամբ կարող են շփոթել, լաւ է, որ խմբապետն առաջնորդուի հետեւալ աղիւսակով, առաջ միացնել՝ 1 և 2-րդ ձայները և ապա այսպէս շարքով, 1-ին և 2-րդ, 2-րդ և 4-րդ, 2-րդ և 3-րդ, 1-ին և 4-րդ, 2-րդ և 4-րդ, 3-րդ և 4-րդ, յետոյ 1-ին, 2-րդ և 3-րդ, 2-րդ, 1-ին և 4-րդ ապա բոլոր ձայները միասին:

Եթէ պարտիաների մէջ պատահեն բարձր կամ շատ ցածր նոտաներ, այդ ժամանակ կարելի է երգել տալ միենոյն պարտիան մի կամ աւելի, մէկ ու կէս տոն բարձր կամ ցածր: Այդպէս պիտի շարունակել մինչև նրանք լաւ կը իւրացնեն, որից յետոյ կիսատոներով կա-

րելի է կամաց-կամաց համել իսկական տոնախն:

Առհասարակ կանոնաւոր խմբական երգեցողութիւն կատարելու համար անհրաժեշտ է, որ երգիչները բոլորն էլ իմանան երաժշտութեան թէկուզ հասարակ թէորիան և սօյլֆեղ-ջիօն. լսողութեամբ երգողների բազմաձայն խումբը միշտ կունենայ թերութիւններ և հակառակ է երաժշտական պահանջներին: Բացի այն, որ կարևոր է երգիչների նոտաճանաչութիւնը, այլ և խիստ հարկաւոր է, որ ամեն երգիչ իմանայ ա) ինչ լազի վրայ է գրւած սովորելու երգը, բ) պէտք է իմանայ այդ լազի գամման, գ) պիտի կարողանայ տոն տալ և որոշել իր պարտիայի ձայնը: Առհասարակ երգիչների մէջ պիտի ուսուցիչ չը մեղցնի համարձակութիւնը. մինչև նա համոզւած չը լինի իր խմբի յաջողութեան վերայ, պիտի խուսափի հրապարակ հանելու այն, որովհետեւ մի անգամ կտրւող երգիչը խիստ յուսահատւում է և կորցնում է համարձակութիւնը:

Խմբի ոեպերտւարը պիտի կազմւած լինի ընտիր երգերից, ոռոմասներն ամենեին տեղ չպէտք է գտնեն դպրոցի ոեպերտուարի մէջ, շատ չնշն բացառութեամբ կարելի է նրանից

օգտւել:

ԵՐԱԾՏՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Գործիքի վերայ նւազած որևէ երաժշտական երկը, կամ խմբով երգածը՝ երաժշտութեան մէջ կոչւում է կատարում կամ գործադրումն:

Երաժշտութեան կատարումը, ինչպէս և զրականութեան մէջ՝ ընթերցումը, կարող են լինել գեղեցիկ և տգեղ, անտարբեր—թափթփւած և կենդանի, աշխոյժ և զգացմունքով: Կատարման այս բոլոր ձևերը մեծ նշանակութիւն ունեն առաւելապէս երաժշտութեան մէջ: Երաժիշտը կամ երգիչը լինելով արտայայտող ուրիշի մտքերի, կարող է աղաւաղել այն—արտայայտել սխալ, դրա համար էլ երաժշտութեան ուսուցիչը հենց առաջին դասերից պէտք է երգիչների ուշադրութիւնը հրաւիրի այն կանոնների վերայ որոնց օժանդակութեամբ անսխալ կերպով կարելի կատարել, որեիցէ երաժշտական երկ:

Մանաւանդ խմբական երգերի ժամանակ, ուր պիտի և անի որոշ հոգեբանական անալիզ, առանց որի կատարումը կը լինի անբնական և երգիչները հոգով չեն կարող մասնակից լինել՝ վարակւել այն արամագրութեամբ, որ պա-

հանջում է կատարած երկը:

Մի որեկիցէ երգի գեղեցիկ կերպով կատարելը պահանջում է.

ա) Լաւ ինտոնացիա: Մի ձայնից միւս ձայնն անցնելը պիտի լինի որոշ և մատեմատիքական ճշտութեամբ: Պարզ արտասանութիւն դժւար հնչւող ձայնաւոր տառերի:

բ) Կանոնաւոր ներշնչումն կարտաշնչումն, որի մասին արդէն ասել ենք:

գ) Ճիշտ կատարումն երաժշտական օժանդակ նշանների—մեղմից ուժեղ, ուժեղից մեղմ, կամաց-կամաց ձայնը մեղմացնել, ուժեղացնել, ճիշտ պիտի գործադրել բոլոր տերմինները, F P. ուշադրութիւն պիտի առնել չափը, սրանցից գուրս կատարած երաժշտութիւնը կը լինի անբնական և տգեղ և չի կարող ծառայել իր խսկական կոչման:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

ա. բաժանմունք.

Դասի նիւթն է.

ԶԱԴՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

(Ա. Վ. Արդութեան-Երկայնաբազուկի երգարա-

Նից. երես 33):

Այդ երգարունում այս երգը գրած է  
F—dur գամմայի վերայ, բայց յարմար է  
ցածրացնել մի փոքր եռեակ և երգել D—dur-ի  
վերայ, որովհետեւ վնասակար է երեխաներին  
ու բեմովից բարձր ու նոտա վերցնել կրծքի  
ճայնով:

Մեր ձագուկը փոսում նստած քնում է,  
Այ խեղճ ձագուկ հիւանդ ես դու,  
Որ չես ուզում կուտ ուտել.

Զագն ուտում է (3 անգամ):

Զագուկ մեր չար կատից զգուշացիր.  
Նա ունի շատ սուր սուր ճանկեր,  
Կարող է քեզ վնասել:

Զագուկը թռաւ (3 անգամ).

Դասի սկզբում արւում է անցած երգերի  
կրկնութիւն, ապա ուսուցիչը լա—կամ ֆա  
վանկով անում է երգի գամմայի հիմնական աս-  
տիճաններով ձայնամարզութիւն, որից յետոյ  
սկսում է զրուցատրութիւն: Ուսուցիչը նախ  
նկարագրում է ձագի ողորմելի դրութիւնը, թէ  
նա ինչպէս անպաշտպան է, դեռ նոր ձւից  
դուրս եկած չը գիտէ իր շրջապատը և ինչպէս  
ամեն վարկեան կարող է նրա գլխին փորձանք  
գալ, ապա հարցնում է դասարանից ովքեր են

ձագերի թշնամիները—աշակերտները պատաս-  
խանում են ուրուրն է, կատուն է: Նրանցից  
վերջին պատասխանը լսելուց յետոյ ուսուցիչն  
խսկոյն սկսում է նկարագրել երգի բովանդա-  
կութիւնը: Երեխայք, ես պէտք է ձեզ մի երգ  
սովորեցնեմ. այժմ դուք կը տեսնէք, թէ  
մի փոքրիկ տղայ ինչպէս միամիտ կերպով մօ-  
տենում է իրենց հաւի ձագին և նրան խոր-  
հուրդներ է տալիս, կարծելով թէ ձագը կարող  
է իրեն հասկանալ և իր խորհուրդներից օգ-  
տւել. ձագը պառկած էր փոսում և արեի ճա-  
ռագայթները տաքացնում էին նրա լղար և կի-  
սամերկ մարմինը. երեխային սկզբում թւում  
է, թէ ձագուկը հիւանդ է, նա կուտ էր թա-  
փել նրա առաջը, իսկ ձագը կտի վերայ ամե-  
նենին ուշը չէր գարձնում, որովհետեւ փոքրիկ  
ձագերը սովորաբար կուտ չեն կարողանում ա-  
խորժակով ուտել, այլ աւելի փափուկ բաներ՝  
օրինակ փշունքներ, եփած ձուի մանր կտորներ  
և պատրաստած խմորի հատիկներ: Բայց ձագն  
ինչպէս երևում է շատ քաղցած էր և հակառակ  
իր սովորութեան քիչ ժամանակից յետոյ սկսեց  
կուտ ուտել, որը մեծ բաւականութիւն և ու-  
րախութիւն պատճառեց երեխային, ահա հենց  
այդ ժամանակ նա սկսեց դանգատւել իրենց  
կատից, նկարագրելով կատւին իբրև մի գա-

զան, որ շատ սուր ճանկեր ունի և կարող է ճագին մնաս հասցնել, այսինքն ուտել. որովհետեւ նա տեսել էր, թէ կատուն ինչպէս իրենց հարեանի ձադուկներից մէկին խեղղել էր և կերել: Ապա եթէ երեխաները հարցեր կուզենան տալ, ուսուցիչը պիտի պատասխանէ նրանց հարցերին մատչելի ձեռվ և սկսի եղանակի ուսուցումը, որի մասին արդէն խօսել ենք:

Զբուցատրութիւնը հարկ եղած զէպքում կարելի է աւելի ընդարձակ անել, մանաւանդ այնպիսի երգեր սովորեցնելիս, որոնք ունեն և բարոյախօսական—կըթիչ բնաւորութիւն, օրինակ «Որը»—Փայլուն արմն արդէն մայր մըտաւ... Լու բացատրութեամբ տարած երգը մեծ տպաւորութիւն է թողնում երեխաների հոգու վերայ, հենց Որը-ի երգը երգելուց դուք տեսնում էք ինչպէս նրանք ոգեորւած են երգում և ամբողջ հոգով մասնակցում են իրենց կատարումին, այստեղ իսկ երգեցողութեան դասը հասած է լինում իր նպատակին:

բ) բաժանմունք.

Դասի նիւթն է «Կուն»

Գերմանական ժողովրդական երկնայն երգ. կայ Սոլ. Մելիքեանի երգեցողութեան դասա-

գրքում: Երգը գրւած է G—Dur գամմայի վերայ, շատ յարմար գամմայ է և կարիք չը կայ առնը փոխելու: Սովորեցւում է միմիայն բառերը և եղանակն առանց նոտերի:

կու, կու, կու, կու

կանչում է կըկուն,

եկէք, երգենք միշտ,

Պարենք, թոչենք զւարթ,

Դէհ շուտ, դէհ շուտ,

Գարուն է գալիս: (Զայնամարզութիւն)

Առաջ նկարագրում ենք կկուն, ինչպիսի թոշուն է նա և ինչու համար ենք նրա անունը կկու դրել և այլն...—Յետոյ սովորեցնում ենք յարակցող ձայնը (բ-բդ ձայնը), երբ համոզւում ենք, որ զասարանը լաւ իւրացրեց այդ, սովորեցնում ենք առաջին ձայնը՝ մելոդիան, որից յետոյ միացնում ենք երկու ձայները: Սյս մեծ փոխանակութիւն և լաւարդինքներ ունի ոչ բոլոր երգերի համար: Յաճախ լինում են երգեր, որոնց յարակցող ձայնը մելոդիական զեղեցկութիւնից զուրկ է, ուստի այդպիսի դէպքերում պիտի խուսափել այդ երգերից. պէտք է խուսափել և այն երգերից, որոնց ճշդրիտ կատարումը զլուկ չի զալիս ինչ ինչ պատճառներով, ինչպէս Օդիւստ Շապիւնէ ասում, որի հետ միանդամայն համա-

ձայն ենք, Այս բաժանմունքում երկրորդ կիսամեակից յետոյ պիտի սովորեցնել աւելի շատ երկծայն երգ, որոնց երբեմն ուսուցիչն էլ կարող է մասնակցել իբրև երրորդ ձայն (Basso), Պատարազի մատչելի կտորներից «փառք քեզ տէր, ամէն» և այլն եռաձայն ակորդներով կարելի է կատարել գասարանում, իբրև յարմար սոլֆեջի, որ իբրև ձայնամարդութիւն լինելուց բացի, կարող է և միջոց ծառայել Forte և Piano, dim... տերմինների գործադրութեան վարժեցնելուն: Յաբմար է և ունիսոնով խըմբական երգեցողութիւն կատարել այս բաժնում, որն էլ իր գեղեցկութիւնն ունի, օրինակ Կ. Վարդապետի «Կաքաւի երգը», որտեղ solo-ի երդածը կրկնում են զանազան խմբեր:

գ) բաժանմունք

Էյ կանաչ ախպէր.

(Ռ. Մելքոնի և Ա. Մանուկեանի «Երաժշտ. այբբեստոն երես 12»).

Դասի նիւթն է C—Dur դամմայի վերայ սովորեցնել վերոյիշեալ երգը նոտերով: Նախ անել համառօտ զրուցատրութիւն բացատրելով, թէ երեխաններն ումն են կանաչ ախպէր ասում, ապա նկարագրել գարունը և նըատւած օդուտները: Սրանից յետոյ սովորեցնել աշակերտնե-

րին լսողութեամբ ճիշտ երգել դրա եղանակը: Ապա կրկնել տալ մի քանի անգամ C—Dur-ի գլխաւոր ակորդներ կազմող նոտաները, որից յետոյ անցնել եղանակի սոլֆեջիօյին, որը կատարելուց մեծ ուշք դարձնել ոիթմայի վերայ: Վերոյիշեալ երգարանը յարմար նիւթ համարել միայն երրորդ բաժանմունքում, եթէ յարմար գանւի միւս դասին թելազրել նոյն թոփչքներ ունեցող մի ուրիշ երգ կամ պարզ վարժութիւն, պահանջել աշակերտներից, որ նըանք լսած երգը գրի առնեն:

Գ. բաժանմունքը վերջացնելուց յետոյ աշակերտները բացի C—Dur գամմայի կազմութիւնը լաւ իմանալուց, պիտի և ունենան թէորիական այն պարզ տեսութիւնը, որ զրւած է նոյն գրքի վերջում: Այս դասարանում կարեոր է երկծայնել և դասարանում երգել այն երգերը, որոնք յիշւած են գրքի վերջում: Երկծայնում է ինքն ուսուցիչը և աշակերտների ուշադրութիւնն է հրաւիրում երկծայնելու երկու գըլխաւոր ձեի վերայ՝ եռեակների և վեցեակների շարւածք: Իւրաքանչիւր երկծայն երգ ամեն մի աշակերտ պիտի իմանայ երգել լսողութեամբ և նոտերով:

Եռձայնելու կանոն և նըա փոխանակումը դասարանում չ'պիտի կատարել, դա աւելի

կծանրացնէ նիւթը և միջոց չի տայ լաւ իւրացնելու այդ բաժանմունքում առաջադրեալ կուրսը: Բայց ինչպէս ասել ենք ուսուցիչն երբեմն կարող է մի քանի աշակերտներ հրաւիրել գրատախտակի մօտ և նրանց երկու մասի բաժանելով երկձայն երգել տայ իւր սովորեցրած երգերից, ինքն էլ մասնակցելով իբրև ակորդներ կազմող հիմնական ձայն (генералъ басъ):

Վերջացնելով մեր ասելիքը ևս այս բաժանմունքների մասին պէտք է աւելացնենք, որ նոտաների ուսուցման այս եղանակը կարիք չը կայ փոխանակելու և Դ. րդ ու աւելի բարձը բաժանմունքներում. այնտեղ արդէն ուսուցիչները տարւայ սկզբից պէտք է իրենց ծրագրը կազմեն (որովհետև ծխական և թեմական դպրոցների համար գեռ ասոլարէզի վրայ չը կայ լաւ և յարմար կազմած ծրագիր, որ նոյն պէս և պարտագիր լինի: Հոգեոր իշխանութիւնն էլ մանաւանդ առաջնուներին առաջադրած ծրագրի նկատմամբ ինքն էլ նկատում է, որ գործը տարւել է անհատական ոյժով, որից և առաջցել է խառնութիւն, որ միաժամանակ առաջադրում է անցնել երեք ձեկի երաժշառութեան, այն է է. Ենէի թւանշանների սիստեմ, հինգ գծային սիստեմ և հայկական նոտաների ուսուցում) և սկզբից և եթ անցնեն

նրա գործադրութեան: Այդ բաժանմունքներում արդէն կարիք չը կայ շարունակել բառերի օգոնութեամբ եղանակի նոտաներ սովորեցնել: Շաբաթական 2 ժամեայ դաս պիտի նշանակւեն բոլոր դասարաններում, երգեցութեան կուրսը միջնակարգ դրոշներում պիտի վերջացած համարել Դ-րդ դասարանում (Շ-րդ տարի), իսկ Ե-րդ և Զ-րդ դասարանում ֆիզիկայի ակուստիկայի մասը պիտի անցնել աւելի ընդունակ և հիմնովին: Կրաevուշ կամ Մալոնին և Բурениն՝ ի դասազբքերից գուրս պիտի և նկատի առնել գուտ մասնագիտական գրքեր:

### Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Թէ առհասարակ ինչ երգեր պիտի անցնել դպրոցներում, զրա մասին մենք արդեն խօսել ենք, բայց այստեղ ուզում ենք մի անգամ ևս շեշտած լինել, որ ժողովրդական երգերը չը պէտք է վտարւեն դպրոցներից, որի համար առաջ ենք բերում 0. Շապիւ Փրանսիացու կարծիքը: «Վերջապէս պիտի թողնել այն թիւր կարծէքը, թէ ժողովրդական գեղարւեստն ապրում է միմիայն ժողովրդական երգերով և որ այդ միայն ընդունակ է զիմելու նրա սրտին և բաւական է նրա լիրիչական պահանջներին

և զարգացումին։ Ի հարկէ ժողովրդական երգը  
ոչ միայն օգտակար է, այլ և անհրաժեշտ,  
բայց ժողովրդական գեղարւեստական ձևի տակ  
ամենազբաւիչն այն է, որ արամադրում է  
դէպի երաժշտական լեզուն, նա մեղ տիրում է  
ծննդից մինչև մահ, անցնելով սերունդներից,  
տարածելով իր ճանապարհի վերայ մարդկային  
ուրախութեան և տիրութեան արձագանքները։

Ժողովրդական երգը պիտի երեխայի ա-  
ռաջին թոթովանքը լինի, մնալով հասունու-  
թեան հասակի սիրող ընկերը, բայց նա մենակ  
չի կարող բաւարարութիւն տալ իդէալական  
այն պէտքին, որ իւրաքանչիւր մարդ կըում է  
իր մէջ, նա իր յագուրդը կարող է ստանալ մի-  
այն իսկական գեղարւեստից, որովհետեւ գեր-  
ջինս ոչ միայն աշխատում է տրամադրել և հըլք-  
ւանք պատճառել, այլ որ զլիմաւորն է, թողնել  
սրտի և հոգու մէջ բարձր և ազնիւ մտածողու-  
թեան սերմեր, հասցնել բարոյական մեծու-  
թեան գեղեցկագիտական կատարելութեան,  
այսինքն ձաշակի և գեղնցի յաղթանակին, գե-  
ղարւեստի սրբազն և վերջնական նպատակին։

— Հ Յ Ց Ց Ց Ց Ց Ց —

Ծ Ր Ա Գ Ի Բ

ա. բաժանմունք

- 1) Երբ մայիսին ես անցնում եմ...
- 2) Արե՛, արե՛, Եկ, Եկ,
- 3) Մանիք, մանիք իմ ճախարակ
- 4) Թռչնիկն ահա.
- 5) Մեր ճագուկը։
- 6) Երկու փոքրիկ նապաստակ.
- 7) Սիրուն անմեղ իմ գառնուկ
- 8) Աղւէսը պառկեց...
- 9) Ծիտը ծառին...
- 10) Կատուն եկաւ փիսիկ-փիսիկ
- 11) Արագիլ, բարով եկար.
- 12) Փիսոն ու աքլորը
- 13) Սիրուն թիթեռ, ինձ տսա,
- 14) Կար չը կար երբեմն.
- 15) Հաֆ, հաֆ, հաֆ,
- 16) Հա ծագեցաւ արեգակը.
- 17) Մարտը տալիս է ձնծաղիկ
- 18) Հաւը խօսեց երեք բերան.
- 19) Լէպ հօ, լէ, լէ.
- 20) Մենք երաժիշտներ ենք։
- 21) Այսպէս է ցանում գիւղացին
- 22) Կաքաւի երգը։

- 23) Աղջկերք պար բռնեցէք։  
 24) Երբոր լեզուս բացւեցաւ.  
 25) Արեգակը դուքս է եկել.  
 26) Մայրիկ ի՞նչու այս խեղճը.  
 27) Վեր կաց մանուկ խորունկ քնից.  
 28) Նոր տարի.  
 29) Հրաւեր. տղայք դպրոց հաւաքւեցէք։  
 թ. բաժանմունք  
 1) Աշունն եկաւ.  
 2) Կարօտ ենք տեսքիդ.  
 3) Յուրաք փչեց.  
 4) Մայիսն եկաւ, բացւեց վարդը սիրունիկ.  
 5) Ուրախութիւն քեզ անպակաս.  
 6) Արի Մանան, արի.  
 7) Մարտն անցաւ.  
 8) Օրօրոցի երգ.  
 9) Ննջիր մանուկ.  
 10) Մանուշակ. սիրուն մանուշակ.  
 11) Հասօյի երգը.  
 12) Փայլուն արել.  
 13) Արտուտիկ ի՞նչու.  
 14) Գարուն է եկել.  
 15) Էյ, կանաչ ախպեր.  
 16) Այ սև ամպեր  
 17) Մեր հայրենիք

- 18) Զէյթունցիներ.  
 19) Կոււեցէք ողէրք.  
 20) Զէյթուն անկախ.  
 21) Արաքսի արտասուքը.  
 22) Արև բացւեց (եռաձայն խումբ ունիսսնով կ. վարդապետի).  
 23) Առաւօտեան թռչնոց երգեր (երկձայն)  
 24) Արի գու, արի (երկձայն)  
 25) Ես լսեցի մի անուշ ձայն.  
 26) Կըկու (երկձայն)  
 27) Օրօր Մոցարտի (երկձայն)  
 28) Պանդուխտ պատանեկի երգը.  
 29) Тамъ вдали за рѣкой.  
 30) Дѣти въ школу собирайтесь.  
 31) Румянной зарю.  
 թ. բաժանմունք: Շաբաթական 2 դաս.

Գծային սիստեմով գիտառնիք գամմայ, հինգ գծերի աստիճանական կարգը. գծամէջ, սկզբում մաժոր գամմայի (գիտառնիք) առաջին քառունակի գրածը երգելև երգածը ձայնագրել, նոյն վարժութիւններն երկրորդ քառունակի վերայ.  $\frac{1}{8}$  չափի նոտաներ. ութմ և չափ. ժամանակի հիմնական բաժանումները: Պառզա  $\frac{1}{8}$  չափի. ի՞նչ է գամման. մաժոր գամմաների կազմութիւնը: Զայնամիջոցներ, նրանց անուն-

**Ները** — օքտաւա. միայն սօլի բանալի: Նոտաների գրութեան ձևերը:

**ա.** դասարան: Շաբաթական 2 դաս.

Տաքտ, հատած, գրուպպիրովկայ. երկմասեան և եռմասեան չափեր. նրանց զանազանութիւնը: Նախատակտ, լիդա, լիգատուրա, ֆերմատօ: Բնական մինոր գամմայ, վարժութիւններ և երգեր բնական մինոր գամմայի վերայ. նրա կազմութիւնը և զանազանութիւնը բնական մաժորից: Զայնամիջոցների շրջումը. ուեպրիզա. ակցենտ: Լողական թելադրութիւն անցած վարժութիւններից կամ երգերից:

**բ.** դասարան: Շաբաթական 2 դաս:

Դիեզ, բեմոլ և բեքար. զարդարանքներ՝ ֆորշագ, գրուպպետօ, տրել և մորդան: Տրիուներ և սեքստուներ: Կազմել մաժոր գամմայ բոլոր նոտաներից դիեզներով, կազմել մաժոր գամմայ բոլոր նոտաներից բեմուներով: Կազմել մինոր գամմայ բոլոր նոտաներից դիեզներով և բեմուներով: Հարմոնիքական մինորի կազմութիւնը. հարմոնիքական մաժորի կազմութիւնը: Տեմբր, դիապազոն. բարդ չափեր  $\frac{6}{8}$ ,  $\frac{3}{8}$ , նոտաներ  $\frac{1}{8}$  չափի: Աւելի բարդ թելադրութիւն. երգել միջակ ծանրութեան վարժութիւններ:

**գ.** դասարան: Շաբաթական 2 դաս.

Նոտաների անունները գերմանական տառերով. գամմաների կարճ անունները: Կրկնակի դիեզ, բեմոլ և նրանց ոչնչացումը: Զայնամիջոցների տեսակները: Գամմայի աստիճանների անունները մինչև վերին տոնիք: Էնգարմոնիզմ. Խրոմատիքական գամմայ. նրա կազմութիւնը: Եկեղեցական լադեր: Զուգահեռ գամմաներ. զարտուղութիւն մինչև 3-րդ աստիճանի (սրծու գամմա 3-րդ ստեպենի) նոտագրութիւնը հեշտացնող նշաններ: Ի՞նչ է ակորդը: Նրանց կազմութիւնը և դիմաւորները. մարդկային ձայնների բաժանումը: Զայների շարժողութեան տեսակները՝ զուգահեռ, կողաւոր և հակագրձ:

**դ.** դասարան: Շաբաթական 2 դաս.

Խիստ ոճի ներդաշնակութեան կանոնները (строгий стиль) 7-րդ աստիճանի եռահնչիւն ձայնները. (трезвучие на 7-мъ ступени) եռահնչիւն ձայնների շրջումները. նրանց անունները՝ նոյնպէս և թւանշաններով: Կաղենցիայ և նրա տեսակները: Զարտուղութիւններ, նոյնպէս և անցողները և նշանակութիւնը, նրա լուծման գլխաւոր ձևերը: 7-րդ աստիճանի սեպտակորդ նրա լուծումը:

Նոնակորդ. Նրա կազմութիւնը և լուծումը՝  
Մի ձայն երկարացնելը (задержаніе), պրե-  
գեոմ, պեղալ և նրա կանոնները։ Ամեն կազ-  
մած խնդիր երգել դասարանում քննադատելով  
հանդերձ. երաժշտական գրւածքների վերլու-  
ծութիւն։ Ծանօթութիւն հայկական նոտագրու-  
թեան հետ։





ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

- 1) Մանկական երգեր I բաժ.—համար . . .
- 2) » » II բաժ.—համար . . .
- 3) Երկայն երգեր . . . .
- 4) Դասագիրք երաժշտութեան . . .

Գինն է 25 լ.

---

Պահեստ՝ Էրևան, Книжный магазинъ  
„АРАРАТЪ“.

«Ազգային գրադարան



NL0306298

